ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
Հասցե՝ ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
Հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 մայիսի 2025 թվականի N 135-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ **2020** ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ **11**-Ի ԹԻՎ **109**-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՄԱՍՆԱԿԻ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով թիվ ՎԴ/10220/05/21 վարչական գործով 04.12.2024թ. կայացված վճիռը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաչագան Հայկի Եսայանի կողմից 03-003-0128-0074 ծածկագիրը կրող հողամասի վարձակալության իրավունքը ՀՀ կադաստրի կոմիտեում չի նույնականացվել, ինչի հետևանքով միասնական տեղեկանքում ու սեփականության վկայականներում վարձակալության իրավունքը չի նշվել, ուստի վարձակալության իրավունքով պատկանող հողամասը օտարվել է աճուրդ-վաճառքի միջոցով Աշոտ Հայրապետյանին և ընդառաջելով Աշոտ Հայրապետյանի խնդրանքին /մտից 31.03.2025թ. թիվ 3418 դիմում/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանին որոշում է.

1. Մասնակի անվավեր ճանաչել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանու 11.09.2020թ. ,ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆԵ թիվ 109-Ա որոշումը՝ բնակավայրերի խառը կառուցապատման 0.0043253 հա հողամասից՝ թիվ 03-003-0128-0074 ծածկագրի (0.0238հա) հողամասի մասով:
2. Թույլատրել ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի ավագանուց՝ Մասիսի համայնքապետարանից հօգուտ ՀՀ պետական բյուջեի փոխանցել 4.000 ՀՀ դրամ՝ որպես պետական տուրքի գումար և հօգուտ Վաչագան Հայկի Եսայանի փոխանցել 250.000 ՀՀ դրամ՝ որպես ներկայացուցչի վճարի փոխհատուցում:
3. Թույլատրել հետ փոխանցել Աշոտ Ռազմիկի Հայրապետյանի կողմից 24.11.2020 թվականին վճարված 10 000 դրամը /տեղական վճար հողի աճուրդ վաճառքին մասնակցելու համար/, 15.12.2020 թվականին վճարված 35 000 դրամը /հողի աճուրդ վաճառքի նախավճար/ և 21.12.2020 թվականին վճարված 769 720 դրամը /աճուրդով վաճառված հողի արժեք/ :

Կողմ -14 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԱՐԹՈՒՐ

ԱՐԱՄԱՅԻՍՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱՖՐԻԿՅԱՆ ՆՈՒՆԵ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐԱՄ

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀԱԿՈԲՅԱՆ ՆՈՐԱՅՐ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԴԱՎԻԹ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ՇԱԲՈՅԱՆ ԵՐԵՄ

ՍԱՐԳՍՅԱՆ ՎԱՐԴՈՒՀԻ

ՎԱՆՅԱՆ ՆԱԻՐԱ

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՕՀԱՆՋԱՆՅԱՆ ԵԼԻԶԱՎԵՏԱ

ՕՍԵՅԱՆ ԶՈՀՐԱԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ